ՍԱՐԴԱՐԱՊԱՏ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
1918-2018

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԼՈԳՈՏԻՊԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 2018

Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հերոսամարտերի 100-ամյակ

# Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակ

Հայաստանը 2018-ին նշելու է Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակը, և այս հատուկ առիթով կառավարության կողմից կազմակերպվելու են տարբեր մշակութային միջոցառումներ և համերգներ: Նշված միջոցառումներին ընդառաջ ստեղծվել է լոգոտիպ, որի օգտագործման ուղեցույցը կներկայացնենք ստորև:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
1918-2018

Մեկ թիվը պատկերված է դաշույնի, թրի տեսքով: Ինչպես հայտնի է ֆիդայինների հագուստի անբաժան մասն էր կազմում սիրիական կեռ դաշույնը:

100 թվի զրոները պատկերված են շրջանի տեսքով, որը հայկական մշակույթում խորհրդանշում է հավերժությունն ու միասնությունը:

Ուրարտական թագավորական գահի մոտիվներով պատրաստված թևավոր ցլերը խորհրդանշում են հերոսամարտի մասնակիցների ուժը, առնականությունն ու վեհությունը:

Զանգակատան զանգերը հնչում էին այն ժամանակ, երբ թշնամին մոտենում էր Հայաստանի սահմանին: Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի հանրապետության 100 ամյակը խորհրդանշող լոգոտիպում օգտագործվել է հուշահամալիրի զանգակատունը, որը շեշտում է շարժումը, ձգտումը դեպի վեր:

# Հիմնական Լոգոտիպ

Հիմնական լոգոտիպը միակ վիզուալ ձևն է, որով մենք կարող ենք պատկերել մայիսյան հերոսամարտերին նվիրված մշակութային միջոցառումների շարքը: Դա այն ակնհայտ ձևն է, որով մենք կարող ենք ճանաչել միջոցառումների պատկանելիությունը:

Հիմնական լոգոտիպը կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից:

**Լոգոտիպի օգտագործում**

Հիմնական լոգոտիպը ստորև ներկայացվածներից առաջինն է: Լոգոտիպը պետք է օգտագործել 100-ով, Սարդարապատի հուշահամալիրի սիմվոլով և տեքստային հատվածով միասին: Թույլատրվում է լոգոտիպն օգտագործել առանց տեքստային հատվածի միայն ֆորս-մաժորային իրավիճակներում: Չի թույլատրվում տրանսֆորմացիայի ենթարկել լոգոտիպի առանձին հատվածները:

**Ազատ տարածություն**

Հիմնական լոգոտիպն օգտագործելիս անհրաժեշտ է պահել դրա ազատ տարածությունը մյուս լոգոտիպերից, դիզայնի գրաֆիկական էլեմենտներից: Լոգոտիպի ազատ տարածությունը պետք է կազմի լոգոտիպի լայնության ⅓ մասը:

**Փոքր չափի օգտագործում**

Հիմնական լոգոտիպի ամենափոքր չափը լայնությամբ 22 մմ է բոլոր տպագրական նյութի համար: Թվային նյութերում հնարավոր ամենափոքր տարբերակը լայնությամբ 57 պիքսելն է:

Ամենափոքր չափը լայնությամբ 22 մմ

# Գույների օգտագործում

Հիմնական լոգոտիպը միակ վիզուալ ձևն է, որով մենք կարող ենք պատկերել մայիսյան հերոսամարտերին նվիրված մշակութային միջոցառումների շարքը: Դա այն ակնհայտ ձևն է, որով մենք կարող ենք ճանաչել միջոցառումների պատկանելիությունը:

Հիմնական լոգոտիպը կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից:

Հիմնական լոգոտիպը կարող է օգտագործվել միայն սպիտակ (գունային տատանմամբ), սև (գունային տատանմամբ) և կապույտ (# 1D2945) գույների ֆոնի վրա:

Լոգոտիպի մոնոխրոմատիկ տարբերակը կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ տպագրական տեխնոլոգիաները չեն թույլատրում ավելին:

*Հիմնական լոգոտիպի գույներ*

*Մոնոխրոմատիկ լոգոտիպի գույներ*

# Լոգոտիպի սխալ օգտագործում

Որպեսզի մենք համոզված լինենք, որ լոգոտիպը պատշաճ ձևով է ներկայացվելու ցանկացած արշավի շրջանակներում, ստորև ներկայացնում ենք լոգոտիպի այն ձևերը, որոնք չի թույլատրվում կիրառել:

Չի թույլատրվում օգտագործել լոտոգիպի առանձին մասերը, որպես առանձին լոգոյի տարբերակ ինչպես տպագիր, այնպես էլ թվային նյութերում:

Չի թույլատրվում օգտագործել լոտոգիպի առանձին մասերը, որպես առանձին լոգոյի տարբերակ ինչպես տպագիր, այնպես էլ թվային նյութերում:

Չի թույլատրվում ոչ համաչափ նեղացնել կամ լայնացնել լոգոտիպը, կամ ենթարկել դա այլ տրանսֆորմացիաների:

Մի փորձեք ուրվագծել լոգոտիպը կամ շողային էֆեկտներ հաղորդել դրան:

Հիմնական լոգոտիպը չի թույլատրվում օգտագործել այլ գունային համադրությամբ, բացի մոնոխրոմատիկ գույների:

Հիմնական լոգոտիպը չի թույլատրվում օգտագործել կարմիր, կապույտ (բացառությամբ #1D2945), նարնջագույն և ոսկեգույն գույների մակերեսների վրա:

# Գույներ

Հայկական դրոշի 3 գույները մեր գլխավոր գույներն են: Հիմնականում օգտագործեք ստորև ներկայացված գույները ցանկացած տպագիր և թվային նյութերում:

Երկրորդային գույների առկայությունը թույլ կտա դիզայներական լուծումներ տալ պատրաստվող նյութերում: Դուք կարող եք օգտագործել հիմնական լոգոտիպի գույնը առանց գրադիենտի: Լոգոտիպի ցանկացած հիմնական գույնը կարող է օգտագործվել որպես դիզայնի տարր:

## *Հիմնական գույներ*

| Color | Gradient | For web use | For print use |
|---|---|---|---|
| #ec1c24 | GRADIENT | FOR WEB USE<br>RED - 236<br>GREEN - 28<br>BLUE - 36 | FOR PRINT USE<br>CYAN - 1<br>MAGENTA - 99<br>YELLOW - 97<br>BLACK - 0 |
| #015b92 | GRADIENT | FOR WEB USE<br>RED - 1<br>GREEN - 91<br>BLUE - 146 | FOR PRINT USE<br>CYAN - 96<br>MAGENTA - 67<br>YELLOW - 18<br>BLACK - 3 |
| #e86628 | GRADIENT | FOR WEB USE<br>RED - 232<br>GREEN - 102<br>BLUE - 40 | FOR PRINT USE<br>CYAN - 4<br>MAGENTA - 74<br>YELLOW - 97<br>BLACK - 0 |
| #81612e | GRADIENT | FOR WEB USE<br>RED - 127<br>GREEN - 95<br>BLUE - 44 | FOR PRINT USE<br>CYAN - 41<br>MAGENTA - 55<br>YELLOW - 93<br>BLACK - 27 |

## *Երկրորդական գույներ*

| Color | For web use | For print use |
|---|---|---|
| #939598 | FOR WEB USE<br>RED - 147<br>GREEN - 149<br>BLUE - 152 | FOR PRINT USE<br>CYAN - 0<br>MAGENTA - 0<br>YELLOW - 0<br>BLACK - 50 |
| #1d2944 | FOR WEB USE<br>RED - 29<br>GREEN - 41<br>BLUE - 68 | FOR PRINT USE<br>CYAN - 93<br>MAGENTA - 82<br>YELLOW - 45<br>BLACK - 47 |

# Տառատեսակ

Հայերեն լեզվի համար հիմնական տառատեսակը “Araratn” է, իսկ որպես երկրորդական տառատեսակ կարող եք օգտագործել “ArialArmST” տառատեսակի ընտանիքը լատինատառ լեզուների համար:

Ներկայացված տառատեսակները ընտրվել են մանրակրկիտ ձևով, խնդրում ենք դրանք օգտագործել հետևողական:

PRIMARY FONT

## ArialArmST

ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՀՁՂՃՄՅՆՇՈՉՊՋՌՍՎՏՐՑՈՒՓՔԵՎՕՖ

աբգդեզէըթժիլխծկհձղճմյնշոչպջռսվտրցուփքևօֆ

1234567890!@#$<>?

SECONDARY FONT

## PF Din

ABCDEFGHIJKLMNOPQRSTUVWXYZ

abcdefghijklmnopqrstuvwxyz

1234567890!@#$<>?

MEZZO
production

Իսահակյան 28

Հեռ՝ +374 10 52-42-33 / +374 96 206-208

Էլ հասցե՝ info@mezzoproduction.com

www.mezzoproduction.com